ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/205

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.05.2022թ. թիվ 26/26-1/7893-2022 գրությամբ Հայկ Խաչատրյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը</u>.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 26.04.2022թ. թիվ ՍՄ//11343-2022 գրության հիման վրա, 03.05.2022թ. թիվ 26/26-1/7893-2022 գրությամբ նախաձեռնել է Հայկ Խաչատրյան Ա/Ձ-ին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Հայկ Խաչատրյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.

Հայկ Խաչատրյան Ա/Ձ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Հայկ Խաչատրյան Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/205 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 11:40-ին և 13.06.2022թ. ժամը 10:31-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.04.2022թ. թիվ ՍՄ//11343-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների 2022 թվականի սննդամթերքի կարիքների բավարարման նպատակով հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀ-ԱՊՁԲ-22/15» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի սույն թվականի մարտի 31-ի հայտերի գնահատման նիստի որոշմաբ 2,3,14,15,22,60,70,100 և 101-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել Ա/Ձ Հայկ Խաչատրյանը (այսուհետ՝ կազմակերպություն): Վերոնշյալ գնման ընթացակարգի տվյալ չափաբաժինների մասով անգործության ժամկետը լրացել է սույն թվականի ապրիլի 6-ին: Սույն թվականի ապրիլի 11-ին կազմակերպությանը ներկայացվել են կնքվելիք պայմանագրերի նախագծերը, սակայն վերջինիս կողմից սահմանված ժամկետում պայմանագրերը չեն ստորագրվել:

Սույն թվականի ապրիլի 20-ին համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ կարգ) 67-րդ կետի կատարվել է հարցում կազմակերպության հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և կազմակերպության կողմից հայտով ներկայացված հարկ վճարողի հաշվառման համարը ստուգելու նպատակով /ՀՎՀՀ 61283056/, ինչպես նաև կարգի 41-րդ կետի պահանջներին համապատասխան կազմակերպությանը ուղարկվել է ծանուցում շտկում կատարելու

վերաբերյալ: Վերջինիս կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը: ՀՀ ՊԵԿ ՀՎՍ վարչության կողմից ստացված պատասխան գրության համաձայն՝ հարցման մեջ նշված տվյալ հարկ վճարողի հաշվառման համարով հարկ վճարող առկա չէ: Համաձայն կարգի 42-րդ կետի կազմակերպության հայտը գնահատվում է անբավարար:

Հիմք ընդունելով կարգի 45-րդ կետի պահանջները, Ա/Ձ Հայկ Խաչատրյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Ձեզ եմ ներկայացնում կազմակերպության կողմից ներկայացված հայտի փաթեթը, վերոնշյալ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունները, ինչպես նաև ուղարկված ծանուցումները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/205 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 11:40-ին և 13.06.2022թ. ժամը 10:31-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/205 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/205 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հայտարարվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀ-ԱՊՁԲ-22/15» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Հայկ Խաչատրյան Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.04.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Կարգի 67-րդ կետի համաձայն կատարվել է հարցում Հայկ Խաչատրյան Ա/Ձ-ի հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով, ինչպես նաև ստուգելու հայտով ներկայացված հարկ վճարողի հաշվառման համարը /ՀՎՀՀ 61283056/: ՀՀ ՊԵԿ ՀՎՍ վարչության կողմից ստացված պատասխան գրության համաձայն՝ հարցման մեջ նշված տվյալ ՀՎՀՀ-ով հարկ վճարող առկա չէ և որոշում կայացրել Հայկ Խաչատրյան Ա/Ձ-ի հայտն անբավարար գնահատելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.05.2022թ. թիվ 26/26-1/7893-2022 գրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 26.04.2022թ. թիվ ՍՄ//11343-2022 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը:

Այսպես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հայտարարվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀ-ԱՊՁԲ-22/15» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Հայկ Խաչատրյան Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.04.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Կարգի 67-րդ կետի համաձայն կատարվել է հարցում Հայկ Խաչատրյան Ա/Ձ-ի հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով, ինչպես նաև ստուգելու հայտով ներկայացված հարկ վճարողի հաշվառման համարը /ՀՎՀՀ 61283056/: ՀՀ ՊԵԿ ՀՎՍ վարչության կողմից ստացված պատասխան գրության համաձայն՝ հարցման մեջ նշված տվյալ ՀՎՀՀ-ով հարկ վճարող առկա չէ և որոշում կայացրել Հայկ Խաչատրյան Ա/Ձ-ի հայտն անբավարար գնահատելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: ***<u>Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:</u>***

Վերոգրյալի հաշվառմամբ՝ գտնում եմ, որ Հայկ Խաչատրյան Ա/Ձ-ն «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀ-ԱՊՁԲ-22/15» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով

նախատեսված խախտում, ուստի առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.05.2022թ. թիվ 26/26-1/7893-2022 գրությամբ Հայկ Խաչատրյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Հայկ Խաչատրյան Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**